



ARMENIAN CATHOLIC CHURCH

TEL: 96493380, FAX: 96493958, MOBILE: 0427404952, E-MAIL: fr.basil@armeniancatholic.org.au

Dear Parishioners,

Come and see Jesus who resurrected from amongst the dead.

Men have forgotten the reason for Jesus taking the human form even though they have been waiting for many years. People have forgotten his numerous miracles, when he made the blind see and the cripple walk and the hearing of the deaf restored and the dead arisen.....

People have forgotten the messages of Jesus, “of love thy enemy and to pray for your persecutors, happy are the poor for theirs will be the kingdom of heaven”.

Despite of all of this they have handed him over to be crucified. However, Jesus had triumphed over death and risen on the third day from amongst the dead.

Jesus as He was in the past is in the here and now and will always be in the future. He will stay within us alive to fend off and protect us from all evil and temptation. He is the only one who could lift us from our selfishness so that we can love God and our neighbour, thus living the real divine life.

Our triumph over evil cannot be achieved until we place ourselves in the hands of the bleeding sacred body Jesus, which is in fact his Church.

My dear parishioners,

You need your church as much as your church needs you, and you are all invited to support it and protect it so that it can provide you with the necessary spiritual nourishment in your lives.

I would like to take this opportunity to wish you all a very happy Easter with your families and friends and may the blessings of the risen Christ fall upon your homes and families.

Սուրբ Յարութեան Հայրապետական Պատգամ – 12.4.2009

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՑ

Այս պանծալի անտիսով, լի ուրախութեամբ եւ յոյսի, ձեզմէ ամէն մէկուն կ'ուզեմ սուրբ Յարութեան այս պատգամը, սիրեցեալ Առաջնորդներ, պատուական հովիւներ, առաքինափայլ կուսաններ եւ ի սփիւռս աշխարհի տարածուած բարեպաշտ հաւատացեալներ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ:

Սուրբ Յարութեան յաղթական ձայնը հնչեց մեր եկեղեցիներէն, մեր տուններէն, մեր սրահներէն եւ մեր դպրոցներէն ներս, ինչպէս նաեւ մեր արտերուն եւ մեր հոգիներուն մէջ, մեզ լուսաւորելով անվախման լոյսով, երկնքի արքայութեան լոյսով, գաղկական ուրախութեան նառագայթող լոյսով:

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի բաւութեան գոհը եւ Անոր փառաւոր Յարութիւնը մեղքէ եւ մահէ ազատագրում պարգեւեցին համայն մարդկութեան: Սակայն այս ազատագրումը կրնայ վայելել միայն այն անձը որ կը հաւատայ թէ Աստուած սէր է եւ թէ Յիսուս Քրիստոս իր միակ Փրկիչն է, եւ ան որ կ'ապրի Ս. Աւետարանին համաձայն:

Արդարեւ Յիսուս ըսաւ. «Եթէ դուք մնաք իմ խօսքիս մէջ, իսկապէս իմ աշակերտներս կ'ըլլաք եւ պիտի մանչնաք հշմարտութիւնը եւ հշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ» (Յովհ. 8, 31-32): Այս հշմարտութիւնը, Յարուցեալ Քրիստոսն է, որ «Իր մահով խորտակեց մահը» եւ ըսաւ. «Ես եմ մանապարհ, հշմարտութիւն եւ

կեանք» (Յովհ. 14,6): Ան մեզ կը հրաւիրէ իրեն հետեւելու՝ իր հիմնած Եկեղեցիին ցուցմունքներուն համեմատ: Սուրբ Յովհաննէս Ոսկեբերան, յարութեան սուրբ տօնին քարոզին մէջ կ'ըսէ. «Թո՛ղ ոչ ոք վախնայ մահէն, որովհետեւ մեր Փրկչին մահը մեզ ազատագրեց մահէն»:

Ուստի, սուրբ Եկեղեցոյ հետ փառաբանե՛նք Յիսուսին յաղթանակը մահուան վրայ եւ ուրախութեամբ ցնծա՛նք, որովհետեւ Յիսուս մեր փրկագինը վնարեց իր մահով: Պարտինք նաեւ մեզի պարգեւած ուրախութեան բաժնեկից դարձնել անոնք որոնք տակաւին մեղքին ստրուկ մնացած են, զիրենք բերելով Քրիստոսի ազատութեան :

Սիրելիներ, նիզ պետք է թափեմք կոշիչու համար «ազատութեան կատարեալ Օրէնքին» (Յակ. 1,25), որ է սուրբ Աւետարանը, որովհետեւ շատ դիւրին է խաբուիլ եւ կամաց կամաց աշխարհի հոգիին հետեւիլ, ինչպէս շատեր կ'ընեն: Պարտինք նաեւ Ս. Աւետարանի ազատութեան շնորհքը մեր ամենօրեայ ապրելակերպով փոխանցել մեր մօտիկ եւ հեռուոր ծանօթներուն: Եթէ մեր սրտին մէջ պահենք ազատութեան Օրէնքը եւ անով ապրինք, առանց ամօթի պիտի ներկայանանք օր մը Արդար Դատաւորին առջեւ:

Մեր շուրջը կան մարդիկ, որոնք կը կարծեն թէ իսկական ազատութիւնը կը կայանայ շատ դրամ դիզելով, կամ իշխանութեան հասնելով եւ կամ հասարակ օրէնքները զանց առնելով: Առանց անդրադառնալու, այսպիսիներ գերի կը դառնան աշխարհի կուռքերուն՝ դրամի, հանգամաւոր դիրքի եւ մեծ համբաւի, եւ հետզհետէ աւելի ենթակայ կ'ըլլան իրենց եաստիրութեան, իրենց կիրքերուն եւ զանազան ուրիշ մոլութիւններու: Իբր հետեւանք՝ փոխանակ ազատութիւնը վայելելու՝ ուղեկորոյս ու դժբախտ կը մնան:

Երանի անոնց, որոնք կը հետեւին Ս. Աւետարանին եւ բարի օրինակ կ'առնեն Սուրբերու կեանքէն, որովհետեւ ասոնք պիտի մանչնան իսկական ազատութիւնը եւ պիտի աշխատին իրենց հոգին ու միտքը ձեռքագատելու փորձութեան խաբուսիկ վայելքներէն:

Երանի անոնց որոնք, օգտուելով Ս. Յարութեամբ վերագտած ազատութենէն, կը գործեն առանց դադարի հաւատարիմ մնալու քրիստոնեայ հաւատքին, հակառակ բոլոր խոչընդոտներու եւ աշխարհի հրապոյրներու, ինչպէս ըրին մեր բիւրաւոր նահատակները:

Երանի անոնց որոնք կը գործեն իրենց յաւիտենականութեան համար, յարուցեալ Յիսուսին հետ միանալու նպատակով:

Երբ Յիսուս, Փաթմոս կղծիին մէջ կ'երեւի Յովհաննէս աւետարանիչին, իրեն կ'ըսէ. «Մի՛ վախնար, ես եմ Առաջինը եւ Վերջինը» (Յայտ. 1,17): Աս ըսելով, Յիսուս կ'ուզէ մեզի ըսել՝ մի՛ վախնա՛ք չարէն, իմ յարութեամբս բարին յաղթեց չարին, որովհետեւ բարին չարէն աւելի զօրաւոր է: Արդարեւ, կեանքը եւ մահը իրարու դէմ նակատեցան Գողգոթայի վրայ սոսկալի մեծամարտութեամբ, եւ կեանքը յաղթանակ ելաւ: Յիսուսի «Մի՛ վախնար» բառերը կը կրկնէ այսօր մեզմէ ամէն մէկուն, մեզի՝ այսօրուայ իր աշակերտներուն, բայց մանաւանդ ֆիզիքապէս եւ հոգեպէս տառապողներուն, որովհետեւ յաղթական Յիսուսը մեզի հետ է:

Սուրբ Պօղոս կ'ըսէ. «Եթէ բու բերնովդ Յիսուս Տէր խոստովանիս եւ եթէ բու սրտովդ հաւատաս թէ Աստուած զինք յարոյց մեռելներէն, պիտի փրկուիս» (Հռոմ. 10,9): Այս խօսքէն մեկնելով, Ս. Օգոստինոս կ'եզրակացնէ հետեւեալ նշմարութիւնը՝ «Քրիստոնեաներուն հաւատքը Քրիստոսի յարութիւնն է»: Ուրեմն, քրիստոնեայ չի սեպուիր ան որ չի հաւատար Յիսուսի յարութեան: Բոլոր մարդիկ կ'ընդունին թէ Յիսուս մեռաւ՝ հեթանոսներն անգամ կ'ընդունին զայն, բայց միմիայն քրիստոնեաները կը հաւատան թէ Յիսուս յարութիւն առաւ: Այս է նշմարութիւնը որ ոյժ եւ քաջութիւն կու տայ բոլոր քրիստոնեաներուն, որ պէսզի հաւատարիմ մնան իրենց սկզբունքներուն եւ չհետեւին աշխարհի հրապոյրներուն կամ գէշ օրինակներուն: Քրիստոսի յարութիւնն է որ ոյժ եւ քաջութիւն կը ներշնչէ երիտասարդ երիտասարդուհիներուն իրենց կեանքը Յիսուսի նուիրելու: Քրիստոսի յարութիւնն է որ կը մղէ նուիրեալներ հոգիները, բայց նաեւ աշխարհականներ, պայքարելու չարին դէմ եւ սփոփելու կարիքաւորներու եւ տառապեալներու ցաւերը՝

իրենց յոյս եւ ուրախութիւն սփռելով: Քրիստոսի յարութիւնն է որ հերոսական ոյժ պարգեւեց բիրաւոր նահատակներուն, որոնք մինչեւ իրենց կեանքին վերջին շունչը հաւատարիմ մնացին իրենց հաւատքին: Ա. Պօղոս առաքեալը աթենացիներուն կ'ըսէ թէ Աստուած բոլոր մարդոց ապահով փաստ մը տուաւ Յիսուսի մասին՝ անոր յարութիւն տալով (տես Գործ. 17,31): Քրիստոնեաները պարտին իրենց շրջանակին մէջ վկայել խօսքով, բայց մանաւանդ իրենց ապրելակերպով, թէ Քրիստոս իսկապէս յարութիւն առաւ, որովհետեւ այս է եկեղեցւոյ հիմնական հաւատքը: Ուստի, ամէն տեղ՝ տան մէջ, գործին մէջ կամ ընկերներուն մօտ, ուր որ Տէրը մեզ դրկէ, պարտինք ըլլալ յարուցեալ Քրիստոսի վկաները, պարտինք լուսաւորել մեր շրջանակը Ա. Յարութեան յուսադրիչ պատգամով: Այս ըմբռնումը պէտք է դառնայ մեր առաջնահերթ մտահոգութիւնը մեր համայնքէն ներս, մեր ժողովրդապետութենէն ներս, ամէն տեղ, մանաւանդ ուր կան տակաւին բազմաթիւ խաբուած մարդիկ, ուր կան նաեւ ատելութիւն, անարդարութիւն, ստախօսութիւն եւ մոլութիւն, որպէսզի գիտնան թէ Յիսուս Իր յարութեամբ պատասխան բերաւ իրենց հարցերուն եւ ցաւերուն:

Սիրելիներ, պայքարի՛նք չարին դէմ յարուցեալ Քրիստոսէ ընդունած շնորհներովը: Անոնց ոյժը վերանորոգե՛նք ամէն օր աղօթքով եւ սուրբ խորհուրդներով: Հետեւի՛նք Ա. Պօղոսի յորդորին, որ կ'ըսէ . «Քրիստոս մեզ ազատագրեց, որպէսզի ազատ մնանք: Հաստատ կեցէ՛ք ազատութեան մէջ, որով Քրիստոս մեզ ազատագրեց, եւ ստրկութեան լուծին մի՛ ենթարկուի՛ք» (Գաղ. 5,1): Վերջիշե՛նք ինչ որ Յիսուս պատուիրեց իր աշակերտներուն, երբ անոնց երեւցաւ իր յարութենէն ետք . «Գացէ՛ք ուրեմն, աշակերտեցէ՛ք բոլոր ազգերը, սորվեցուցէ՛ք անոնց պահել ինչ որ ես պատուիրեցի ձեզի եւ ես ահաւասիկ ձեզի հետ եմ ամէն օր մինչեւ աշխարհի կատարածը» (Մտք. 28, 19-20):

Լիայոյս սրտով իմ հայրական բարեմաղթութիւններս կը յայտնեմ ձեզի՝ սիրեցեալ Առաջնորդներ, հովիւներ, եղբայրներ եւ քոյրեր Յիսուս Քրիստոսի փառապանծ եւ լուսաւոր Յարութեան տօնին առիթով, ինչպէս նաեւ համայնքի բոլոր գաւակներուն ի սփիւռս աշխարհի, մանաւանդ Մայր Հայրենիքին մէջ:

Թող աշխարհի Փրկիչը, որ յաղթական դուրս ելաւ գերեզմանէն, պարգեւէ ձեզի շնորհքի ոյժ, անսահման ուրախութիւն եւ հաստատ խաղաղութիւն . Ամէն:

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՆԵԼՈՅ — ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԴՆԵՐԱՆ ԱՆՏՐՈՍ ԺԹ.

Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

Holy Thursday 9th April

The washing of the feet ceremony will be celebrated at 6.00 pm. This is a most solemn ceremony in which Jesus conveys the message of humility to his disciples. Let us all make a special effort to attend and witness this symbolic ceremony repeated , where the priest takes the role of Christ and our children the role of the disciples.

At the end of the ceremony, all present will retire to the church Hall where we will share a meal of fish and chips prepared by the Ladies Auxiliary.

Good Friday 10th April

The ceremony of the internment of our Lord Jesus will take place at 6.00pm. This is the day when we as Christians, have the opportunity to relive the last moments of the life of Jesus. It was His final act in order to fulfil the prophecy of his death and resurrection.

We ask our parishioners to join us during these most sacred and solemn ceremonies, so that we can show our Lord that we are ready to follow in his footsteps and that we truly believe in Him and His sufferings, and to let him know that we are his true followers and that His death to save us from the mortal sin was not in vain.

The Film of St Francis of Assisi will be screened and the traditional Falafel will be available for all to enjoy.

24th April Commemorative Program

Saturday 18th April

At 7.30 pm the Armenian Apostolic and the Armenian Catholic Churches of Sydney in conjunction with the Armenian national committee Sydney west will be commemorating the Armenian Genocide in the newly refurbished Church hall of the Armenian Apostolic Church in Wentworthville, 26 Garfield Street, west of Sydney.

We urge all Armenians and all our parishioners to attend and support this commemorative service. As Armenians, we cannot allow the memory of our forefathers who martyred themselves to save our race and religion to fade away. Let us all stand up and show the world that despite of all the atrocities against us they could not succeed in destroying this resilient and talented race.

Sunday 19th April

At 5.30pm at UTS Ku-ring-gai Campus, Eton Road, Lindfield, the three major Armenian organizations under the auspices of the all the Armenian Churches have joined forces to commemorate the martyrs. (our forefathers who perished during the first Genocide of the 19th century). It is very encouraging indeed to finally see the getting together of all Armenians in Sydney. It is imperative to show the world that the children of all those who have perished during this Genocide, demand that their voice be heard, and that all decent nations bring to bear on the Turkish government the necessary pressure to recognize the evil deed their ancestors have committed. This is the only way that the descendents of the genocide victims can have a sense of closure. Again we urge that all Armenians make a super effort to attend this historic commemorative concert which we believe will be a memorable occasion and an unforgettable cultural experience.

Sunday 26th April

Mass for the victims of the genocide will be held at our church at 11.00am, and immediately after the holy Mass at approximately 12.15pm, the ladies Auxiliary will be serving Luncheon.

At 2.00 pm we will all visit the cemetery to say the prayers for the dead (Hokehankist). At the end of these prayers we will head towards the "Reading" Cinemas on Parramatta road, Auburn, where the screening the Film of "The lark Farm" will take place. It is a moving story about an Armenian family during the Genocide.

Please note: that all are invited and admission is gratis, that is, free "See Flyer".

Mother's day 1st May 2009

Dear all, mother's day party will be held on the 1st May, and as per usual our Ladies Auxiliary are in the process of selling the tickets. These tickets are very limited and it will be on a first come first served basis. Please secure your tickets early so that you will not be disappointed. It will be a very special function and let us all get together and make it a very memorable day for all the mothers in our community. For tickets please contact the Ladies in the committee or Fr Parsegh.